ՔՈԱՖ-ն ավելի քան 400,000 ԱՄՆ դոլար է հավաքագրել՝ Լոռու ՍՄԱՐԹ կենտրոնում նոր մարզական խաղադաշտ կառուցելու համար

ԵՐԵՎԱՆ, հունիսի 5, 2025 — «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) պաշտոնապես հայտարարում է իր 2025թ. գարնանային դրամահավաքի հաջող ավարտի մասին. արշավի շրջանակում հավաքագրվել է ավելի քան 400,000 ԱՄՆ դոլար, որը կուղղվի Լոռու ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի տարածքում նոր մարզական խաղադաշտի կառուցմանը: Այս արդյունքը գերազանցում է մեր նախնական 200,000 ԱՄՆ դոլար վերջնանպատակը, որը սահմանվել էր արշավի մեկնարկին՝ ապրիլ ամսին:

Հարյուրավոր նվիրատուների և գործընկերների աջակցությամբ՝ ՔՈԱՖ-ն այժմ ընդլայնում է իր նախնական ծրագիրը՝ ներառելով հետևյալ բաղադրիչները.

- **ՖԻՖԱ-ի չափորոշիչներին համապատասխան ֆուտբոլի դաշտ**, որը կանվանակոչվի՝ ի պատիվ Վահե և Անի Բեդյանների,

- **Բասկետբոլի և վոլեյբոլի առանձին խաղադաշտ,** որը կանվանակոչվի՝ ի պատիվ Արմեն և Գլորիա Համփարների ընտանեկան հիմնադրամի,

- **Նոր խաղահրապարակ և հանգստի գոտի**, որը կանվանակոչվի՝ ի պատիվ Focus on Children Now (FCN) կազմակերպության:

Նախաձեռնության հաջողության գործում առանցքային աջակցություն է ցուցաբերել նաև ՔՈԱՖ-ի վաղեմի բարեկամ «Ջոն և Հասմիկ Մկրտչյաններ» հիմնադրամը (JHM):

Սպորտային համալիրը կծառայի Լոռու մարզի շուրջ **30 համայնքի** երեխաներին՝ դառնալով ապահով ու ոգեշնչող միջավայր՝ առողջ ապրելակերպը խթանելու, թիմային ոգի ձևավորելու և ակտիվ խաղի միջոցով ինքնավստահություն սերմանելու համար:

«Սպորտը երեխայի զարգացման համար կենսական նշանակություն ունի»,- նշում է ՔՈԱՖ գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը: «Այն, ինչ մենք այսօր սկսում ենք իրագործել, հնարավոր է դարձել միայն մեր համայնքի անսահման նվիրվածության շնորհիվ: ՔՈԱՖ-ի աջակիցներն այսպիսով նպաստել են հազարավոր երեխաների պայծառ ապագայի ձևավորմանը»:

«Սա ներդրում է Հայաստանի ապագայի մեջ: Ամեն նվիրատվություն վկայում է այն մասին, որ երեխաները, անկախ ծննդավայրից, արժանի են զարգանալու, երազելու և իրենց ներուժը բացահայտելու հնարավորության: Մենք խորապես շնորհակալ ենք մեր աջակիցներին՝ այս նախաձեռնությունը իրականություն դարձնելու համար»,- հավելում է ՔՈԱՖ հիմնադիր և խորհրդի ատենապետ դոկտոր Գարո Արմենը:

Նոր սպորտային համալիրը կկառուցվի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի տարածքում, որտեղ արտադպրոցական կրթական ծրագրերի են հաճախում շաբաթական ավելի քան 1700 լոռեցի երեխաներ:

Լրացուցիչ տեղեկությունների և/կամ ՔՈԱՖ-ի առաքելությանը միանալու համար այցելե՛ք՝ www.coaf.org կայք:

Մեդիա կոնտակտ՝
Մարկ Գարգարյան
Մարքեթինգի և հաղորդակցության բաժնի ղեկավար
«Հայաստանի մանուկներ» հիմնադրամ (ՔՈԱՖ)
mark.gargarian@coaf.org

Գործընկերության հնարավորություն՝
Հայկ Բոյաջյան
Զարգացման գծով փոխնախագահ
«Հայաստանի մանուկներ» հիմնադրամ (ՔՈԱՖ)
haig.boyadjian@coaf.org